

Արձանագրություն թիվ 1

2019 թվականի սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 3-րդ Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրություն:
2. Տարրական դասարաններում <<Տաք սնունդ>> ծրագրին ծնողական աջակցություն ցուցաբերելու և ծնողական ներդրումների հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրության հարցը:

Դասվարի Ար. Սարգսյանը նախ շնորհավորեց բոլոր ծնողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ: Նա նշեց, որ ձևավորելու են ծնողական խորհուրդ՝ նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Ակտիվ քվեարկության արդյունքում ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Անի Բաղայանը: Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Բաղայան Անի /նախագահ/
2. Անդրեասյան Ժամին / անդամ/
3. Բաղայան Խանում /անդամ/
4. Հայրապետյան Ռուզաննա /անդամ/
5. Վարդանյան Անուշ /անդամ/

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասվարին:

2. Լսեցին.- Տարրական դասարաններում <<Տաք սնունդ>> ծրագրին ծնողական աջակցություն ցուցաբերելու և ծնողական ներդրումներ կատարելու հարցը:

Դասվար Ար. Սարգսյանը ծնողներին տեղեկացրեց, որ աշակերտները շարունակելու են մասնակցել <<Տաք սնունդ>> ծրագրին: Նա ասաց, թե ինչ սննդամթերք է ընդգրկված այդ ծրագրի շրջանակներում, որը բավարար չէ այն ռացիոնալ կազմակերպելու համար: Անհրաժեշտ է շարունակել ծնողական աջակցությունն ու ներդրումը: Ուսուցչուհին ասաց, որ այդ ներդրումները լինելու են 300 դրամի

սահմանում: Գումարները տնօրինելու են յուրաքանչյուր դասարանից ընտրված ծնողները:

Որոշեցին.- Հավաքել 300-ական դրամ և այդ աշխատանքը հանձնարարել ծնողական խորհրդի նախագահ Անի Բաղայանին:

3. Լսեցին.-Ընթացիկ հարցեր/դասացուցակ, ռեժիմ/:

Ար. Սարգսյանը ծանոթացրեց դպրոցական ռեժիմին: Ծնողներին ներկայացրեց իրենց երեխաների շաբաթական ծանրաբեռվածությունը /26 ժամ/, 2-րդ դասարանում ուսումնասիրվող առարկաներն և դասավանդող ուսուցիչներին: Դասվար Ար. Սարգսյանը նշեց, որ ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է ձեռք բերել թեմատիկ տետրեր մայրենի և մաթեմատիկա առարկաներից: Տետրերի ձեռքբերման գործընթացը կկազմակերպեն ծնողական խորհրդի անդամները:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց պարտականությունները, հետևել աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակին, մշտական կապ պահպանել դասվարի և դպրոցի հետ: Ապահովել երեխաներին անհրաժեշտ ուսումնական նյութերով:

Ժողովի նախագահ՝

Քարտուղար՝

Ան Բաղայան

Ժ. Անդրեասյան

